Աշտարակի հնավայրերի կամ էքսպեդիցիոն տարածքների հուշարձանային կազմակերպումը

Ոսկանյան Ռ. Գ.
Հայաստանի Գեղարվեստի Պետական Ակադեմիա, ասպիրանտ *(Երևան, Հայաստան)*
rubenvoskanyan.e34@gmail.com

Վճռորոշ բառեր՝ Աշտարակ, պատմամշակութային հուշարձան, հնավայր, էքսպեդիցիա, նախամարդ, դիզայն, առաջարկ, պատմական, մշակութային ժառանգություն, արգելոց, պահպանություն

Монументальная организация аштаракских археологических памятников или экспедиционных участков

Восканян Р. Г.
Государственная академия художеств Армении, аспирант (Ереван, Армения)
rubenvoskanyan.e34@gmail.com

Аннотация: Каждая нация высоко ценит свою индивидуальность и особенности и старается сохранить ее в максимально возможной степени.
История и культура человека зародились тысячи лет назад, когда он был знаком только с камнем. Следовательно, необходимо начать исследования с этого исторического слоя.
С момента принятия Всеобщей конвенции 1972 года, основное внимание уделялось тому факту, что «повреждение или исчезновение любого объекта культурного или природного наследия ведет к разрушительному обнищанию наследия всех народов мира».
В городе Аштарак есть замечательные образцы древних памятников и их останков. Целью темы является разделение и изучение этих зон, после чего, согласно концепции, проводится зонирование территории, организация доступных подходов, переходов, зон отдыха, установка необходимых информационных щитов. Все это позволит посетителям познакомиться с древним слоем истории и культуры города Аштарак.
Ключевые слова: Аштарак, историко-культурный памятник, древний памятник, экспедиция, доисторический, дизайн, предложение, историко-культурное наследие, заповедник, защита.

Monumental organization of Ashtarak ancient sites or expeditionary areas State Academy of Fine Arts of Armenia

Voskanyan R. G.
State Academy of Fine Arts of Armenia, Postgraduate student (Yerevan, Armenia)
rubenvoskanyan.e34@gmail.com

Abstract: Every nation values its identity and features and tries to preserve it as much as possible.
Man's history and culture began thousands of years ago, when he was only familiar with stone. Therefore, it is necessary to start the research from that historical layer.
Since the adoption of the 1972 World Convention the focus has been on the fact that "the damage or disappearance of any cultural or natural heritage site leads to the destructive impoverishment of the heritage of all nations of the world."
In the city of Ashtarak there are remarkable examples of ancient monuments and their remains. The aim of the topic is to separate and study these areas, after which, according to the concept, to make in the area zone, to organize accessible approaches, passages, recreation areas, to install the necessary information panels. All this will make it accessible for visitors to get acquainted with the ancient layer of history and culture of Ashtarak city.
Keywords: Ashtarak, historical and cultural monument, ancient monument, expedition, prehistoric, design, proposal, historical and cultural heritage, reserve, protection.

Յուրաքանչյուր ժողովուրդ բարձր է գնահատում իր ինքնությունն ու առանձնահատկությունները և փորձում է առավելագույնս պահպանել այն: Դրա համար անհրաժեշտ է ոչ միայն պահպանել եղածը, այլև ուսումնասիրել և գտնել պատմամշակութային տարբեր շերտեր, որը հնարավորություն է տալիս ձևավորել ազգերի պատմական ու մշակութային հիմքը:

Մարդու պատմությունն ու մշակույթը սկիզբ է առնում դեռ հազարամյակներ առաջ, երբ նա դեռ ծանոթ էր միայն քարին: Հետևաբար անհրաժեշտ է ուսումնասիրությունները սկսել պատմական այդ շերտից: 1972 թ. համաշխարհային կոնվենցիայի ընդունման սկզբից ի վեր ուշադրության կենտրոնում այն է, որ «մշակութային կամ բնության ժառանգության

ցանկացած օբյեկտի վնասումը կամ անհետացումը հանգեցնում է աշխարհի բոլոր ազգերի ժառանգության կործանարար աղքատացմանը»: Հենց այստեղ է ձևավորվում հոդվածի գիտական խնդիրը:

Համաշխարհային ուշագրավ օրինակներից է Սթոունհենջ մեգալիթյան խոշոր կառույցը, որը մեծ ճանաչում ունեցող հուշարձաններց մեկն է: Այն գտնվում է Մեծ Բրիտանիայում՝ Լոնդոնից շուրջ 130 կմ դեպի հարավ-արևմուտք: Այն կառուցվել է քարի դարից դեպի բրոնզի ու երկաթի դար անցնելու ժամանակներում՝ մթա 1900-1400 թթ.: Սթոունհենջի կիրառելիության մասին կան տարբեր վարկածներ: Դրանցից մեկը, ըստ որոշ հետազոտողների այն է, որ դա եղել է հնագույն աստղադիտարան: հուշարձանահամալիրին այցելուների թիվը տարեկան հասնում է մոտ 300 հազարի:

Նմանատիպ հնագույն կառույց է նաև Հայաստանի Սյունիքի մարզում գտնվող Քարահունջը (Զորաց քարերը): Դա նույնպես մեգալիթյան կառույց է և պետության կողմից հատուկ պահպանության տակ է: Գտնվում է Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի մոտ՝ ճանապարհի հարևանությամբ: 2004 թվականին այն Հայաստանի կառավարության կողմից ճանաչվել է որպես հնագույն աստղադիտարան: Որոշ գիտնականներ համակարծիք են այդ ենթադրությանը, իսկ որոշները մերժում են դա և համարում են, որ այն դամբարանադաշտ է:

Այդպիսի հնագույն հուշարձաններ ու մնացորդներ կան նաև Աշտարակ քաղաքում:

Թեմայի նպատակն է առանձնացնել և ուսումնասիրել այդ տարածքները, ինչից հետո, ըստ հայեցակարգի կատարել տեղանքի գոտևորում, կազմակերպել մատչելի մոտեցումներ անցումներ, հանգստի հատվածներ, տեղադրել անհրաժեշտ տեղեկատվական վահանակներ: Այդ ամենը այցելուների համար հասանելի կդարձնի, Աշտարակ քաղաքի պատմության և մշակույթի հնագույն շերտին ծանոթանալը: Թեման ավելի արդիական է դառնում, երբ տարբեր գրականություններ ուսումնասիրելով, պարզ երևում է, որ Աշտարակ քաղաքի ծագման, իրադարձությունների մասին տեղեկությունների մեծ մասը հիմնված են ենթադրությունների վրա:

Ներկայացվող թեմայի առնչությամբ Աշտարակի տարածքում կան բազմաթիվ հուշարձաններ, սակայն միջավայրի կազմակերպման տեսակետից այդ հնավայրերից առավել հատկանշական են՝ Վերին Նավերի տարածքը, Խոջաբաղեր դամբարանադաշտը, Ուրարտական ջրանցքը, Դարաբավոր այրերը, Ուլատիտիկ անունը կրող հին բնակավայրը

Վերին Նավեր (գծ. 1)

Հայկական պատմական մեծ ժամանակաշրջան է ներառում Վերին Նավեր հուշարձանախումբը (նկ. 1):



Գծ.1 Վերին Նավեր (վերցված է Հակոբ Սիմոնյանի Վերին Նավեր գրքից)



Նկ.1 Ուշ բրոնզի դարի դամբարան Վերին Նավերում

Այն գտնվում է Աշտարակի տարածաշրջանում, մասնավորապես ընդգրկում է Փարպի համայնքի, Աշտարակ-Գյումրի, Աշտարակ-Ագարակ ճանապարհների մերձակա աջ և ձախ հատվածները: Դամբարանադաշտը զբաղեցնում է շուրջ 200 հա տարածություն, որն ընկած է Շաղվերդ գետի ձախակոմյան սելավատարի (Վիշապաձորի) ավազանում և Արագած լեռան հարավ-արևելյան ստորոտում: Այստեղ գտնվող դամբանաբլուրներից բացի տարածաշրջանում կան նաև վերգետնյա հատվածներից զուրկ և խաթարված դամբարաններ, որոնցով հանդերձ Վերին Նավերի դամբարանների քանակությունը հազարից ավելի է: «Այսպիսով, կարող ենք փաստել, որ դամբարանների քանակով և զբաղեցրած տարածքով Վերին Նավերը ոչ միայն Հայաստանի, այլև Առաջավոր Ասիայի միջին բրոնզի դարի ամենաընդարձակ դամբարանադաշտերից է, որտեղ թաղումներ կատարվել են ավելի քան մեկ հազարամյակ՝ Ք.ա 3-րդ հազարամյակի 2-րդ կեսից մինչև Ք.ա. 12-11 դդ» [**1**, էջ 8]: Հետևաբար դրանք լինելով

Աշտարակի տարածաքում դրանց տարածքի կազմակերպումը նույնպես կարևոր է, Ստորև ներկայացվող հերթականությամբ Վերին Նավեր հուշարձանախմբի ժամանակարջանը ձգվում է միջին բրոնզի դարից մինչև միջնադարյան քարակոթողներ:

- Միջին բրոնզի դարի դամբարաններ
- Ուշ բրոնզի դարի դամբանաբլուրներ
- Վաղ երկաթի դարի դամբանաբլուր
- Կեղծ (կենոտաֆ) դամբարաններ
- Հելլենիստական և միջնադարյան բնակատեղիներ
- Միջնադարյան քարակոթողներ

Խոջաբաղեր կամ խաչայգի

«Խոջաբաղեր» դամբարանադաշտը գտնըվում է Աշտարակ քաղաքի հյուսիս-Արևմտյան եզրային հատվածում, Աշտարակ-Գյումրի ճանապարհի աջ կողմում՝ բուն բնակավայրից դուրս: Ըստ վերգետնյա հնագիտական նյութերի համեմատական վերլուծության, այն թվագրվում է մթա 2-1 հազարամյակով: «Խոջաբաղեր» դամբարանադաշտը նաև անվանվում է«Խաչայգի»: Այստեղ բլրապատ տեղանքի վրա երևում են մեծ ժայռաբեկորներ: Դամբարանադաշտն ավերված է, իսկ դամբարանների արտաքին նշանները՝ խաթարված: «Խոջաբաղեր» դամբարանադաշտի շուրջբոլորը մշակովի այգիներ են:

Դարաբավոր (նկ.2)

«Դարաբավոր» այրերը գտնվում են Աշտարակ քաղաքի հյուսիս արևելյան հատվածում՝ Քասաղի կիրճում: Այստեղ ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է հին ամրոցի մնացորդներ: Վերգետնյա խեցեղենի համեմատական վերլուծության և օգտագործած շինանյութերի մշակման հիման վրա ամրոցը թվագրվում է մթա 2-րդ հազարամյակ: Այն գտնվում է Աշտարակից 2 կմ հյուսիս արևելք, Քասաղ գետի աջափնյա բարձրադիր վայրում, հրվանդանի վրա: Այն զբաղեցնում է մոտ մեկ հեկտար տարածք: Այն իր արևելյան հատվածում ունի երկու անցում, դեպի Քասաղի կիրճ, մյուս երեք կողմերից ամրացված է անմշակ անմշակ բազալտե բերդապարիսպով: Պարիսպից ներս երևում են բազմաթիվ շինությունների ավերակներ, հիմնականում աղավաղված հատակագծերով և փլուզումից առաջացած քարակույտերով [**2**, պասպորտ՝ ամրոց «Դարաբավոր»]: Ամրոցից հյուսիս-արևմուտք, Քասաղ գետի աջափնյա հատվածում տարածվում է դամբարանադաշտը: Դա նույնպես թվագրվում է մթա 2-րդ հազարամյակով: Դամբարանադաշտը սկսվում է Երևան – Վանաձոր մայրուղին իրար կապող կամրջի մոտից և Քասաղի կիրճով վեր բարձրանալով ընդհատումներով հասնում մինչև Մուղնի թաղամաս: Դամբարանադաշտի զգալի մասը խիստ ավերված է: Պահպանվալ են տարբեր չափերի, աստիճանաձև բարձրացող կրոմլեխներով շրջագծված, քարահողային լիցքով դամբարանաթմբեր: Տարածքում թափված են խեցեղենի և օբսիդիանի մնացորդներ [**2**, պասպորտ՝ դամբարանադաշտ «Դարաբավոր»]:

Դարաբավոր այրերի ներքևում, կա մի տապանաքար, որը մինչև օրս պահպանվել է: Այն կոչվում է Նահատակի գերեզման (նկ.3):

Նկ.2 Դարաբավոր այրերը

Նկ.3 Նահատակի գերեզման

Այս տապանաքարը կապվում է 18-րդ դարում լազգիների կողմից կատարված արշավանքների հետ: Լազգիները՝ ուրիշ ցեղերի հետ միասին, մտել են Հայաստանի հյուսիս-արևելյան գավառները և կոտորելով ու կողոպտելով հասել են Սևանա ծով և այդտեղից տարածվել ամբողջ երկրով [**3**, էջ 176]: Այդ արշավանքների ժամանակ աշտարակցիները ուրիշ ելք չգտնելով, թաքնվել ու պատսպարվել են Դարաբավորի այրերում, որոնք իրենց անմատչելությամբ բոլոր կողմերից ապահով ապաստան են եղել: Ըստ ավանդության լազգիները բռնելով գյուղացիներից մեկին, բերել են Դարաբավորի այրերի տակ և ստիպել են նրան, որպեսզի համոզի թաքնվածներին դուրս գալ կացարաններից: Սակայն նա, հակառակը, հորդորել է նրանց մնալ իրենց տեղում և դուրս չգան այդտեղից [**3**, էջ 177].

Ավ ձորի մարդիկ,
Անունս է Վարդիկ.

Ինձ տեսեք, ձեր գլուխը լացեք,
Որտեղ որ եք, ղայիմ կացեք:

Ըստ այդ ավանդության այդ գերեզմանը պատկանում՝ Վարդիկին: Սակայն կան այլ ավանդություններ ևս կապված Նահատակի գերեզմանի հետ:

Ուրարտական ջրանցքը (գծ.2)

Աշտարակի պատմական ջրանցքը, որը տեղացիները կոչում են Ականատեսի առու (նկ.4), կառուցվել է Ք.ա. 8-7-րդ դարերում՝ Ուրարտական (Արարատյան) թագավորության ժամանակ: Այս մասին Հ.Ս. Եղիազարյանը գրում է՝ «*Ուսումնասիրությունները պարզել են, որ դեռ Ուրարտացիների տիրապետության շրջանում հատուկ ջրանցք է փորված եղել Քասախ գետից՝ այգիներն ու պարտեզները ոռոգելու համար*» [**4**, էջ 52]: Ջրանցքը գտնվում է Քասաղի կիրճում, սկիզբ է առնում Աշտարակի Մուղնի թաղամասի (այն ժամանակ՝ գյուղ) մոտից, Քասաղ գետից, դրա աջակողմյան հատվածով շարունակվում մինչև Աշտարակ [**2**, պասպորտ՝ ջրանցք «Ականատեսի առու»]:

Ոմանք այն համարում են Շամիրամի ջրանցքի մի հատվածը՝ կառուցված առասպելական Շամիրամի կողմից, որով սնուցում էր Վանը շրջապատող հողատարածքները: Չի բացառվում, որ այստեղ ժամանակին եղել են ավելի վաղ շրջանում կառուցված ոռոգման ջրանցքներ, ընտանի ցորենի արտեր և այլ մշակովի տարածքներ, որոնք յուրացվել են ուրարտացիներից 5000 (կամ ավել) տարիներ առաջ:



Գծ.2 Ուրարտական ջրանցքը(Ականատեսի առու)

Նկ.4 Հատվածներ Ականատեսի առվից

Ջրանցքը դարերի ընթացքում վերակառուցվելով՝ հասել է մինչև մեր օրեր: Դրա հիմնական վերանորոգումներից մեկի մասին նշվում է նաև Կարմրավոր եկեղեցու արևմտյան խաչթևի վրա փորագրված արձանագրության մեջ՝ «*Շնորհին Աստուծոյ ես Յակոբ երէց ըստ կարի մերոյ նորոգեցի զմեծ առու տեղւոյս բազում աշատութեամբ որ խախտեալ էր հիմանց՝ յիշատակ հոգոյ իմոյ և որք աւղնական եղեն տրաւք. և աւանդ գրեցի որ շինած տուն եկեալ տնանդաց աւթևան լինի՝ որ ի դրաց սորին .. և ի տարին տասն աւր յորոյ անուն ի տաւն Քառասնիցն: Ով խատիան՝ դատի յԱստուծոյ. կատարիշք գրոյս աւրհնին յԱստուծոյ; Թվ. ՉԽԱ(1292)*» [**4**, էջ 56] :

Սկզբնական շրջանում առուն փոքր է եղել և բավարարել է գյուղի այդ ժամանակվա պահանջներին, բայց Աշտարակի հետզհետե մեծանալու և այգիների ավելանալու հետ մեկտեղ, գյուղացիները մեծացրել, խորացրել ու լայնացրել են առուն: Ջրանցքի՝ Աշտարակ մտնող հատվածը կոչվում է Մայր առու: Գյուղի գլխից՝ Մելիքի բախչից (*բախչա Աշտարակի բարբառով նշանակում է տնամերձ կամ տան հարակից այգի*), առուն տարվել է գյուղամեջ, որտեղ այն անցել է գլխավոր փողոցով: Այդ տարածքը, մի կողմում ուռենիներ տնկած լինելու պատճառով, կոչվել է Ուռուց: Այդտեղ առուն ճյուղավորվել է և կառուցվել է դրա գլխավոր ջրբաժանը՝ կավառը, որտեղից առվի մի ճյուղը թեքվել է ձախ, մյուսը շարունակվել է ուղիղ և կոչվել է Լոմի առու:

Հետզհետե, բնակչության ավելացմանը և Աշտարակի ընդարձակմանը զուգահեռ, մեծացել ու երկարել է Աշտարակի ջրանցքը: Այժմ էլ այն հանդիսանում է Աշտարակ քաղաքի ոռոգման հիմնական աղբյուրը՝ ձգվելով մինչև քաղաքի ամենախորը հատվածները:

Ուլատիտիկ (գծ.3)

Ուլատիտիկ բնակավայրը գտնվում է Աշտարակ քաղաքի արևելյան եզրին, համանուն բլրի վրա (նկ. 5): Անվան բացատրությունը՝ Ուլատիտիկ – Ուլերի նստելու (տիտիկ անելու) տեղը: Այսինքն, այստեղ ժամանակին Աշտարակի բնակիչներն արածեցրել են իրենց փոքր եղջերավոր անասուններին, հիմնականում՝ ուլերին:



Գծ.3 Ուլատիտիկ

Նկ.5 Ուլատիտիկ բլուրը՝ Ֆոնին Աշտարակ քաղաքը

Ուլատիտիկում հայտնաբերված դամբարանադաշտը թվագրվում է մոտավոր Քա. 2-րդ հազարամյակի վերջ: Տարածքն ուսումնասիրվել է 1990թ. Գվ գ/ա արվեստանոցի պասպորտավորման արշավախմբի կողմից [**2**, պասպորտ՝ դամբարանադաշտ «Ուլատիտիկ»]: Դամբարանադաշտը բաղկացած է երկու մասից՝ առաջինը հարավ-արևելյան լանջն է, իսկ երկրորդը տարածքի հյուսիսում ընկած հատվածն է: Ըստ այդ ուսումնասիրությունների, ամենայն հավանակությամբ, դամբարանադաշտի այդ երկու հատվածները ժամանակին կազմել են մի ամբողջություն և ջրամբարների կառուցման հետևանքով բաժանվել երկու մասի: Հայտնաբերված դամբարանները արտաքինից նույնատիպ են: Դրանք թեթև ուրվագծված կրոմլեխներ են, ներսում մեծ քարերից դրված ծածկասալերի հատվածներով: Կան նաև մանր քարերից հավաքված դամբանաբլուրներ, որոնք ժամանակի ընթացքում ձուլվելով շրջակայքի հետ՝ գրեթե կորցրել են բարձրությունը և դարձել դժվար տեսանելի:

Ուլատիտիկում հայտնաբերվել են նաև Ամրոցի մնացորդներ: Այն գտնվում է Ուլատիտիկի արևելյան հատվածում՝ բլրի վերնամասում և մոտավոր թվագրվում է Քա. 6-5 րդ դարեր: Ամրոցը հատակագծով կլոր կառույց է, ունի մեծ աշտարակաձև կառուցվածք և պատրաստված է մեծ ծավալներ ունեցող անմշակ քարերով: Պահպանված ամենաբարձր հատվածը 2,30 մետր է, տրամագիծը 11 մետր է [**2**, պասպորտ՝ ամրոց «Ուլատիտիկ»]:

Չնայած նրան, որ Ուլատիտիկը պատկանում է պատմական շատ հին ժամանակաշրջանի և արժեքավոր հնավայր է, այստեղ որոշ հատվածներ գտնվում են վատ, իսկ երբեմն էլ շատ վատ վիճակում և աստիճանաբար վերածվում են աղբանոցի (նկ. 6):

Նկ.6 Ուլատիտիկ

Ինչպես նշվեց հոդվածի սկզբում թեմայի նպատակն է առանձնացնել և ուսումնասիրել, կատարել այդ տարածքների միջավայրի հարմարեցումը այցելության համար, ինչպես նաև ըստ հայեցակարգի անցկացնել հուշարձաններն իրար հետ կապող մայրուղի: Մայրուղուց կազմակերպել ամեն մի հուշարձանավայրը գնացող երթուղի: Մեծ կարևորություն ունի յուրաքանչյուր տեղանքի գոտևորումը, կազմակերպել մատչելի մոտեցումներ, անցումներ, հանգստի հատվածներ, տեղադրել անհրաժեշտ տեղեկատվական վահանակներ: Քանի որ նշված հնավայրերը գտնվում են Աշտարակ քաղաքի շրջակայքում, կարելի է դիտարկել շրջանաձև մոտեցումների տարբերակը, որը հնարավորություն կտա քաղաքի պատմամշակութային հուշարձաններին ծանոթանալ ըստ ժամանակաշրջանի՝ հնից դեպի նորը, որը կսկսվի Ուլատիտիկ բնակավայրից և Դարաբավորի այրերով անցում կատարել քաղաքի ամենահին թաղամաս՝ Բերդաթաղ:

Ինչպես նաև Դարաբավորի այրերը և ուրարտական ջրանցքը, որոնք գտնվում են քասաղի կիրճում: Հնարավոր է նույնպես առանձին կազմակերպել արշավային մոտեցումներ, որոնց միջոցով ոչ միայն կարելի է տեսնել նշված տարածքները, այլ նաև որոշակիորեն ծանոթանալ և ինտեգրվել քարանձավաբնակ և նոր զարգացող մարդու ապրելակերպին:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Սիմոնյան Հ. Ե.**, Վերին Նավեր: Գիրք Ա (1976-1990 թթ. պեղումների արդյունքը): - Եր.: Երևանի համալսարանի հրատարակչություն, 2006: - 188 էջ:
2. ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ–ի արխիվ:
3. **Երվանդ Շահազիզ**, Աշտարակի պատմությունը: - Եր.: «Հայաստան» հրատարակչություն, 1987: - 348 էջ:
4. **Եղիազարյան, Հ. Ս.**, Աշտարակ (Բնակավայրը և պատմական հուշարձանները և վերջիններիս վիմագրությունները): // «Էջմիածին». Պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, ԻԳ (Ը), 1966թ, էջ 52-59:

Сдана/Հանձնվել է՝ 24.06.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 26.06.2020
Принята/Ընդունվել է՝ 29.06.2020